ՄԱՐՏ

1913 ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 10

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑ Է
առաւօտեան ժ. 10—1-ը (բացի կիրակի և տօն օրերից):
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷՆ՝
Москва, Редакція армянск. журн. „МАРТЪ".
Rédaction de la Revue „MART" Moscou,
ՀԵՌԱԽՕՍ № 73-58.
Խմբագրատունը՝ Рыбниковъ пер., д. 3, кв. 10.

ԲԱԺԱՆԵԳԻՆԸ
տարեկան 4 ր. կէս տարին 2 ր.
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 20 ԿՈՊ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝
տողատեղին (պետիտ) 50 կ. Տեկստից առաջ՝ կրկնակի: Հրատարակութեան, ուսուցչութեան և բանուորութեան համար ½ մասը.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. ՆՐԱՆՔ ԼՈՒՌ ՄՆԱՑԻՆ. ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄՂՁԱՒԱՆՋԸ—Ն. ՆԵՐՍԷՍ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՍԱՐԱՋԵԱՆ. ՓԱԽՍՏԱԿԱՆ—ՎԼ. ԳԻԼԵԱՐՈՎՍԿԻՑ—Թարգմ. ՕՐ. ՄԵՆԻԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ. ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ. ՔՐՈՆԻԿՈՆ. ՀԱՅԱՇՆԱԿ ՎԱՅՐԵՐ ԵՒ ԳԱՂՈՒԹՆԵՐ—Շամախի—Շամախեցի. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆՐԱՆՔ ԼՈՒՌ ՄՆԱՑԻՆ

Այո, նրանք լուռ մնացին։

Ծնծութեան և զուարճութեան ձայները նրանց ականջներին չհասան։

Զնգում՝ ոչ երանաւէտ հայրապետների շարականները, ոչ ժամանակակից գուսանների երգերը, ոչ էժանագրուած «կեցցէ»ների ձայները։

Նրանք մնացին պատերից դուրս, մնացին հեռու։

Նրանք, որ 1500 տարուայ ընթացքում արիւնոտ խաչի հետ Մեսրոպի գիրը ամփոփեցին կրծքերին և, յենուած նրանց պատերին, հասցրին մեզ. նրանք, որ Մեսրոպի լեզուով աղօթեցին և այն լեզուն արիւնաքամ դարերի ընթացքում պահպանեցին մեզ համար. նրանք, որ հրանօթների արանքում հայրենեաց խոպան վայրերը արեան քրտինքով առոգելով, մինչև օրս կանաչազարդեցին, նրանք համայնքային Մեծ Տօնի խրախճանքին լուռ մնացին։ Նրանց աթոռ չտուեցին՝ Մեծ Յոբելեանի հանդէսին մասնակցելու և իրանց գիրը կարդալու։ Նրանց ամբիոն չտուեցին՝ իրանց լեզուն բաց անելու։ Նրանց ճանապարհ չտուեցին իրանց կանաչեցրած դաշտերին շրջելու։

Նրանք լուռ մնացին։

Միլիոնաւոր գիւղացիները, նրանց հետ և արհեստաւորներն ու բանուորներն ինչ անեն, ոչ հասկացան և ինչպէս մասնակցեցին Մեծ Յոբելեանի հանդէսներին։

Ոչ ապարէն ոչինչ, ոչինչ և ոչինչ։

Բայց մեր համար էին այդ ամբողջները, այդ դատարկ թնդիւնները։ Ովքեր են, որ այսօր հայրենասէրի պատմուճաններով և հայ կուլտուրականի քղամիդով գնացին Մայր Աթոռ Էջմիածին և շրջապատեցին Մեծն Գրիգորի գահակալին։ Ովքեր են, որ գնացել են ժողովրդի կողմից և խառնուել վարդապետների շարանները։

Ոչ ապարէն ամենախոշոր մասը հասարակ և հասարակութեան հարստակալները, ոչ ապարէն պնակալէզ կղերականները, ոչ ապարէն բուն ժողովրդի անհարազատ երևոյթները։

Դեռ ոչ նրանց լեռների ու ձորերի արանքներում ապրող շինականը, ոչ գաւառների խորքերում նրանց յիշատակարաններով կենդանի արհեստաւորը, այլ նոյն իսկ մայրաքաղաք և կենտրոն Թիֆլիսում՝ Մեծ Յոբելեանի օրը կատարուած հանդէսներին մասնակցել են նրանք, որոնք համարուել են ընտրեալներ, բայց որոնց չէ ընտրել ժողովուրդը, որոնց գոյութեան մասին գաղափար չունէին Մեծն Մեսրոպի հարազատ, ռամկային անապարոյն արիւնակիցները։

Եւ ժողովրդի առաջ փակուած են եղել Թիֆլիսի թէ մայր եկեղեցու թէ հոգևոր դպրանոցի դռները, որտեղ հանդէսներ են կատարուել Մեծ Յոբելեանի յիշատակին։ Իսկ հոգևոր առաջնորդը, առաւ իր վերջին ծառայութիւնն զգալով, նոյնիսկ դպրանոցի դռներից դուրս մնացած ամբոխին է ու, որպէս մխիթարութիւն նրանց սրտերին, ասել է.

— Հարկաւոր չէ անպատճառ տեսնել և ներկայ լինել հանդէսին, հարկաւոր է հոգով ու սրտով զգալ։

Որքան գեղեցիկ է։

Ժողովրդին հարկաւոր չէ ներկայ լինել հանդէսին, նրան հարկաւոր է հոգով ու սրտով զգալ։

Բայց ովքեր են, որ արժանացել են հանդէսին ներկայ լինելու։

Ինչ տարակոյս, որ առաջնորդի լոգիկան պարզ է։ Նրա լոգիկայով հանդէսին պիտի ներկայ լինեն նրանք, որոնք չեն կարող հոգով ու սրտով զգալ, այլապէս ասած, որոնք ոչ հոգի ունեն, ոչ սիրտ։ Եւ որովհետև այդ հանդէսի գլուխը հէնց ինքն առաջնորդն է եղել, նշանակում է, որ նա խոստովանում է որ ինքն էլ ոչ հոգի ունի, ոչ սիրտ։ Եւ արդ՝ տեղին չէ՞ վայ տալ ժողովրդին, որի առաջնորդն ոչ հոգի ունի, ոչ սիրտ։

Որ բարձուան սիրտ չունի, այդ Աւետարանի մէջ էլ ասւում է. «որտեղ ձեր գանձն է, այնտեղ և ձեր սիրտը», բայց որ հոգևոր առաջնորդն իբրև հովիւ իւր անձը պիտի դնէ ոչխարների վրայ, այդ էլ քարոզում է Աւետարանը։ Արդ՝ Թիֆլիսի առաջնորդը Աւետարանի մի իմաստն է առաջնորդւել, ժողովրդի առաջ Մեծ Յոբելեանի հանդէսը փակելով. քարոզելով, որ նա մխիթարուի հոգու ու սրտի զգացմունքով։

Որ ժողովուրդը միշտ ապրել է և ապրում է հոգու և սրտի զգացմունքով, այդ էլ պարզ է և որ նա՝ ժողովուրդն է Մեծն Մեսրոպի աւանդութիւնը իւր հոգու և սրտի զգացմունքով պահել-պահպանել ու հասցրել մեզ, այդ էլ կարօտ չէ բացատրութեան, սակայն շատ տգեղ պիտի համարուի այն վարմունքը, որ միայն հանգամանքի շնորհիւ այժմ ձեռք բերելով, խլում է ժողովրդինը և տալիս անհատների, որոնք ոչ մի կերպ կապուած չեն ժողովրդի հետ, էլ առաւել կապուած չեն ոչ հոգով և ոչ սրտով։ Նաև հոգով ու սրտով կապուած չեն ոչ Մեսրոպի մեզ թողած աւանդութիւնների ոչ էլ 400 տարուայ տպագրական գործի հետ։

Եւ երբ դեռ Թիֆլիսում—ռուսահայոց մտաւոր կրթութեան այդ կենտրոնում Հայկական ազգի այս մեծ ու նշանաւոր տօնախմբութեան օրը հանդիսավայրերի դռները փակում են ժողովրդի առաջ, փակում են ժողովրդի շրթունքները ու նա մնում է լուռ, մնում է անման Մեծ Հօր յիշատակին տրուած մեծարանքներին, ինչ կանէ այն միլիոնաւոր ժողովուրդը, որ վաղ առաւօտից մինչև ուշ երեկոյ կամ դաշտանի ծայրից բռնած, կամ մանգաղն ու գերանդին է ձեռին կամ եզան ու գոմէշի հետ ժամերն անցնում ու նրանց հետ Մեսրոպի լեզուով խօսում նրանց Մեսրոպի բառերով ոգևորում։

Ինչ կանէ առաւօտից մինչև երեկոյ ճակատից աղի քրտինք թափող բանւորը, օրուայ տքնաւոր դառնացոյն կտորներով ձեռք բերող արհեստաւորը, որոնք յամենայն դէպս ամուր պահողներն են Հայոց լեզուի, Մեսրոպի լեզուի։

Եւ ոչ-ոք խօսեց, ու ոչ-ոք ձայնակցեց կղերի ու կղերականների նախաձեռնութեամբ կազմուած խրախճաններին և ոչ-ոք ուրախացաւ այն օրը, որ յիրաւի, համայն հայութեան մտաւոր յառաջադիմութեան պանծալի Նաւասարդն էր։

Թող էջմիածնից սկսած հայութեան բոլոր վայրերում Մեծ Յոբելեանի օրը բուրվառներով ու քշոցներով փառաբանուի, թող այն մեծարուի հայրապետական ու եպիսկոպոսական հանդիսադրութեամբ, այսուամենայնիւ, այն օրն անցաւ անշուք, այն օրը Հայկական ազգի պատմութեան մէջ մի նորաշող պատգամ չմտաւ, մի վարդավառ էջ չբացուեցաւ, վասն զի ազգութեան կռուանը, հայրենիքի կերոնակիրները և արածին կաթիլներով հայրենի երկրին կեանք տուողները լուռ մնացին։

Նրանք չխօսեցին, վասն զի ուղղորդատորները խլեցին նրանց խօսքը, նրանք լուռ մնացին, վասն զի փականք դրուեց նրանց շրթունքներին։ Սակայն չենք տարակուսում, որ պատերի մէջ, ուր բամբիռն ու չունգուրը քաղցրալից տրամադրութիւն էին վառում թէ եպիսկոպոսներին և թէ նրա սրտակից ու հոգեկից բարձուաններին, ուր փրփրադէզ շամպայնը աղբիւրի պէս յագեցնում էր անոյշ երգերի ու ոգեպարար պատրանքների սիրահարներին, հնչւում է մէկի անունը—ժողովրդի անունը։ Բայց նա չլսեց այդ և չէր կամենալ լսել, վասն զի կեղծաւորութիւնը անհանդուրժելի է միանգամայն։ Եւ եթէ լըրջօրէն ուշ դնէին ժողովրդի մրմունջներին, կըլսէին միայն, որ նա սրտի խոցուած խորքերից համազգային մեծ օրը արտասանում է վասպուրականցի բանաստեղծի խօսքերը.

Թող, ախպէր, Թող, որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էնի,
Թող իմ աչք կլկլացող սըգաւոր սըգաւոր աղբիւր էնի.
Թէ դուն էլ արտասուք ունիս, արի ինձ հետ ու լաց արա,
Մեր արտասուք Թող ամպ կապի, Հայոց դաշտեր անձրև էնի: